Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 525 - Ա
որոշման

«Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 794 - Ա
որոշման

«ՀՈՎԱՐԴ ԿԱՐԱԳՅՈԶՅԱՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Երևան քաղաքի Կենտրոն վարչական տարածքի սահմաններում կազմակերպությանը պատկանող հողատարածքում ժամանակակից պայմաններին համապատասխանող կենտրոնի կառուցում, կազմակերպության կողմից բարեգործական ծրագրերի իրականացման, այդ թվում՝ մինչև 14 տարեկան երեխաներին անվճար ատամնաբուժական և ակնաբուժական օգնության, ինչպես նաև սոցիալական աջակցության տրամադրման նպատակով: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Հովարդ Կարագյոզյան հիշատակի ընկերակցություն (ԱՄՆ – Նյու-Յորք, 381 Պարկ Ավենյու Սաութ) |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպություն (քաղ. Երևան, Նորքի Այգիներ 180, ՀՎՀՀ՝ 01533153) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, բնագավառը՝ առողջապահական |
| 6. | Ծրագրի բյուջեն | 3,396,302,000 դրամ |

| | | |
|---|---|---|
| 7. | Բարեգործություն ստացողը | Կազմակերպության բարեգործական ծրագրերի շահառու հանդիսացող անձինք, մասնավորապես Հայաստանի Հանրապետության մինչև 14 տարեկան երեխաները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2021 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2027 թվականի հունիսի 30-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1) կառուցվելիք շենքի ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի մշակում, հեղինակային հսկողություն, մշակված նախագծային փաստաթղթերի համաձայնեցում իրավասու մարմինների հետ, քանդման աշխատանքներ՝ 140,948,500 դրամ, նախատեսվում է իրականացնել 2021-2022 թվականներին, բացառությամբ հեղինակային հսկողության և լրացուցիչ նախագծային աշխատանքների, որոնք իրականացվելու են շենքի կառուցման շինարարական աշխատանքներին զուգահեռ.<br>2) շենքի կառուցման շինարարական աշխատանքների իրականացում, շենքի շահագործման փաստագրում՝ 2,730,000,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023-2026 թվականներին.<br>3) Կենտրոնի ներսույթի ձևավորում, սարքավորումներով հագեցում և կահավորում՝ 410,032,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2025-2026 թվականներին և 2027 թվականի առաջին կիսամյակի ընթացքում.<br>4) այլ լրացուցիչ աշխատանքների (այդ թվում՝ շինարարական աշխատանքների շրջանակներում մասնագիտական խորհրդատվություն, չափագրման, շենքի կառուցման ընթացքում ծագած չնախատեսված աշխատանքներ և այլն) և կազմակերպական ծախսերի իրականացում՝ 115,321,500 դրամ, նախատեսվում է իրականացնել ծրագրի ամբողջ ընթացքում: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի մշակում և հեղինակային հսկողություն՝ 40,000,000 դրամ.<br>2) քանդման շինարարական աշխատանքներ՝ 76,881,000 դրամ.<br>3) լրացուցիչ նախագծային աշխատանքներ (այդ թվում՝ ներսույթի, արտաքին գազամատակարարման, ջրամատակարարման, էլեկտրամատակարարման համակարգերի առնչությամբ)՝ 24,067,500 դրամ.<br>4) շենքի կառուցման շինարարական աշխատանքներ, նյութերի ձեռքբերում՝ 2,730,000,000 դրամ.<br>5) կահույքի պատրաստում/ձեռքբերում, սարքավորումների ձեռքբերում՝ 410,032,000 դրամ.<br>6) կազմակերպական ծախսերի շրջանակներում շինարարական աշխատանքների գծով հաշվապահական հաշվառում՝ 2,730,000 դրամ.<br>7) կազմակերպական ծախսերի շրջանակներում իրավաբանական խորհրդատվության ստացում՝ 10,083,500 դրամ. |

| | | |
|---|---|---|
| | | 8) այլ լրացուցիչ աշխատանքների (այդ թվում՝ շինարարական աշխատանքների շրջանակներում մասնագիտական խորհրդատվություն, չափագրման, շենքի կառուցման ընթացքում ծագած չնախատեսված աշխատանքներ և այլն) իրականացում՝ 102,508,000 դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | 1) իրավաբանական խորհրդատվության ստացում՝ 10,083,500 դրամ.<br>2) շինարարական աշխատանքների գծով հաշվապահական հաշվառում՝ 2,730,000 դրամ: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Երևանի քաղաքապետարան, Առողջապահության նախարարություն |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով լիազորված մարմին տեղեկությունների ներկայացում: |

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

13.08.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ